

կէս ճանապարհին վախճանեցաւ ի Լեմբերդ (Լվով) 1551ին : Իր յաջորդն Միքայէլ Սեբաստացի († 1574) կը շարունակէ պահպանել յարաբերութիւնները Ս . Աթոռին հետ . Արքարդարի առաքելութիւնն ի Հռոմ նոյն քաղաքական նպատակները կը հետապնդէր : Թէպէտ դրական որ եւ է արդիւնք չտուին այս բանակցութիւնները, բայց եւ այնպէս Թադէոս կաթողիկոս (1583) ապրեցաւ Արեւմուտքի հետ թղթակցութեան մէջ : Իսկ ի Հռոմ կ'օրօրուէր նոյն խորհուրդներով Արքարդարի որդին Սուլտանչազ-Մարկանդոնիոյ († 1585) ¹ :

Այնուհետեւ, երբ մանաւանդ Օսմանեանց եւ Պարսից մէջ թշնամութիւնները ծայր առին եւ Արեւմուտք Օսմանեան բանակը յաղթական կը յառաջանար, աննպատակ տեսնուեցաւ ազատութեան յոյսերով տարուբերուիլ : 1579ին Երեւան ինկած էր Օսմանեանց ձեռքը :

Այսպէս, թէպէտ ապարդիւն մնացին ազատագրութեան ամէն փորձերը, բայց չկտրեցաւ այն յոյսը, թէ Արեւմուտքէն պիտի ծագի փրկութիւնը :

Օսմանեան տիրապետութեան տակ, բայց յատկապէս ապստամբ բանակի արձակերասանակ իշխանութեան օրերուն, աւելի անտանելի դարձած էր կեանքը արեւելեան դաւառներու մէջ : Տանջուած, հարստահարուած, խիստ հարկապահանջութենէ յուսահատու-

¹ Այս խնդիրներու մասին Հ . Ն . Ակինեան, Ազատութեան շարժումը ԺԵ.—ԺԶ. դարուն Հայոց մէջ. Հանդէս Ամսօրեայ, 1917/18, էջ 142—154 :